ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝khachpar.ararat@mta.gov.am

№ 260

« 18» հուլիսի 2019 թ.

ՀՀ Արարատի մարզպետ

պարոն Գ. Սարգսյանին

Հարգելի պարոն Սարգսյան,

Ձեզ են ներկայացվում Խաչփար համայնքի ավագանու 10.07.2019թ. №17, №18, №19, №20, №21-Ն, №22, №23 որոշումների կրկնօրինակները՝ առդիր 9 թերթ:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝khachpar.ararat@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» հուլիսի 2019 թվականի № 17

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի № 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 10-ի № 5 հերթական նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1.Համայնքի ղեկավարի կողմից 2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին
2. Համայնքի 2019 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին
3.Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը վարձակալությամբ տալու, պայմանները և վարձավճարի մեկնարկային չափը սահմանելու մասին
4.Համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 21-ի № 45-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
5.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդով վաճառելու և մեկնարկային գները սահմանելու մասին
6.Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և Արարատի մարզի Խաչփար համայնքի միջև ՀՀ կառավարության 2018 թ. սեպտեմբերի 27-ի թիվ 1073-Նորոշմամբ նախատեսված առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք ծրագրերի շրջանակներում համագործակցության մասին համաձայնագրին հավանություն տալու մասին

Կողմ(7) դեմ(0) ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ
ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» հուլիսի 2019 թվականի № 18

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» № 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով՝ ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի կողմից 2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային հաշվեկշռին՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության, սեփականության սուբյեկտների և օգտագործման ձևերի՝ համաձայն հավելվածի:

Կողմ(7) դեմ(0) ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ
ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» հուլիսի 2019 թվականի №19

## ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ ավագանին որոշում է.

Ընդունել ի գիտություն Խաչփար համայնքի 2019 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Կողմ(7) դեմ(0) ձեռնպահ(0):

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ
ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի

Խաչփար համայնքի ավագանու 2019 թվականի

հուլիսի 10 -ի № 19 որոշման

## 2019 Թ. ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

| ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2019թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | 2-ՐԴ ԵՌԱՄՍ. ՊԼԱՆ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | ՓԱՍՏԱՑԻ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | ԿԱՏԱՐ ՄԱՆ % | ԿԱՏԱՐ ՄԱՆ % ՏԱՐԵ ԿԱՆ ՊԼԱՆԻ ՆԿԱՏՄ ԱՄԲ |
|---|---|---|---|---|---|
| Վարչական բյուջե | 47 548.9 | 23 481.0 | 24 136.3 | 103 | 51 |
| Հողի հարկ | 4 320.0 | 2 000.0 | 2 160.3 | 108 | 50 |
| Գույքահարկ | 4 750.0 | 2 500.0 | 2 515.0 | 101 | 53 |
| Տեղական տուրք՝ընդամենը | 340.0 | 170.0 | 382.0 | 225 | 117 |
| Համայնքային հողերի օգտագործման վարձավճար | 416.8 | 200.0 | 237.8 | 113 | 57 |
| Տեղական վճարներ | 3 000.0 | 1 500.0 | 1 678.1 | 112 | 56 |
| Պետական բյուջեից համահարթեցման դոտացիա | 33 222.1 | 1 6600.1 | 1 6600.1 | 100 | 50 |
| Այլ ոչ հարկային եկամուտներ | 1 500.0 | 500.0 | 563.0 | 113 | 37 |
| Ֆոնդային բյուջե | 24 510.2 | 24 510.2 | 24 510.2 | - | - |
| Հողերի օտարումից մուտքեր | - | - | 7.5 | - | - |
| **Եկամուտներ: Ընդամենը** | 72 059.1 | 47 980.3 | 48 654.0 | 101 | 67 |

## 2019 Թ. ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

| ԾԱԽՍԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2019 թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | 2-ՐԴ ԵՌԱՄՍ-ՅԱԿԻ ՊԼԱՆ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | ՓԱՍՏԱՑԻ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | ԿԱՏԱՐՄԱՆ % | ԿԱՏԱՐՄԱՆ % ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ |
|---|---|---|---|---|---|
| Վարչական բյուջե | 47 548.9 | 23 481.0 | 16 194.9 | 69 | 34 |
| Օրենսդիր և գործադիր մարմին պետական կառավարում 01.1.1 | 20 806.0 | 10 728.0 | 8 356.8 | 78 | 40 |
| Աշխատակազմի/ կադր.գծ. ընդh. բն.ծառ.-եր 01.3.1 | 50.0 | 30.0 | - | - | - |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 01.3.3 | 170.0 | 81.6 | 71.6 | 88 | 42 |
| Ընդհանուր բնույթի հանր. ծառայություններ 01.6.1 | 1 410.0 | 850.0 | 117.5 | 14 | 8 |
| Գյուղատնտեսություն 04.2.1 | 100.0 | 100.0 | - | - | - |
| Ոռոգում 04.2.4 | 2 000.0 | 1 200.0 | 698.0 | 58 | 35 |
| Աղբահանում 05.1.1 | 1 500.0 | 750.0 | 579.0 | 77 | 39 |
| Փողոցային լուսավորում 06.4.1 | 300.0 | - | - | - | - |
| Գրադարան 8.2.1 | 1 235.0 | 620.0 | 514.0 | 83 | 42 |
| Այլ մշակութային կազմակերպ.-ներ 08.2.4 | 450.0 | 100.0 | - | - | - |
| Նախադպրոցական կրթություն 09.1.1 | 12 000.0 | 5 807.4 | 4 968.0 | 85 | 41 |
| Միջնակարգ կրթություն 09.2.2 | 100.0 | - | - | - | - |
| Սոցիալական հատուկ արտոնություն 10.7.1 | 2 300.0 | 1 120.0 | 890.0 | 79 | 39 |
| Պահուստային ֆոնդ 11.1.2 | 5 127.9 | 2 114.0 | - | - | - |
| Ֆոնդային բյուջե | 24 510.2 | 24 510.2 | - | - | - |
| Ծախսեր : Ընդամենը | 72 059.1 | 48 011.2 | 16 194.9 | 34 | 22 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» հուլիսի 2019 թվականի №20

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ ավագանին որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին տալ վարձակալության՝

03-050-0213-0013 ծածկագրով 1.9 հա 4-րդ կարգի ջրովի,

03-050-0210-0021 ծածկագրով 0.1 հա 4-րդ կարգի ջրովի,

03-050-0210-0011 ծածկագրով 0.34 հա 4-րդ կարգի ջրովի,

03-050-0114-0013 ծածկագրով 0.13 հա 2-րդ կարգի ջրովի,

գյուղատնտեսական նշանակության հողամասերը՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով:

2. Հողամասերի վարձավճարի մեկնարկային չափը սահմանել տվյալ կարգի հողի հարկի տարեկան դրույքաչափին հավասար:

3. Վարձակալության ժամկետը սահմանել երեք տարի:

Կողմ(7) դեմ(0) ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ
ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս`098777709,
էլ. փոստ`khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

« 10 » հուլիսի 2019 թվականի № 21-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի № 45-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով` ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 21-ի «Համայնքի 2019 թվականի բյուջեի հաստատման մասին» № 45-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ.

1) Որոշման 3-րդ կետով հաստատված հավելվածի հատված 2-ի աղյուսակից հանել 5-րդ, 10-րդ և 14-րդ տողերը, 13-րդ տողի «2 300.0» թիվը փոխարինել «2 170.0» թվով, աղյուսակը լրացնել «06.3.1 Ջրամատակարարում 5 807.9» տողով,

2) Որոշման 4-րդ կետով հաստատված հավելվածի հատված 3-ի աղյուսակի « 4239 ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածի «270.0» թիվը փոխարինել «20.0» թվով, «4241 մասնագիտական ծառայություններ» հոդվածի «400.0» թիվը փոխարինել «300.0» թվով, «4729 այլ նպաստ» հոդվածի «1 800.0» թիվը փոխարինել «1 670.0» թվով, աղյուսակից հանել «4269 հատուկ նպատակային այլ նյութեր 200.0» և «4891 պահուստային ֆոնդ 5 127.9» տողերը, աղյուսակը լրացնել «4653 այլ կապիտալ դրամաշնորհներ համայնքներին 5 807.9» տողով,

3) Որոշման 5-րդ կետով հաստատված հավելվածի հատված 6-ից հանել «04.2.1 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ», «08.2.4 ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ» և «11.1.2 ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ» աղյուսակները, «10.7.1 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» աղյուսակի «1 700.0» թիվը փոխարինել «1 570.0» թվով, «2 300.0» թիվը փոխարինել «2 170.0» թվով,

4) Որոշման 5-րդ կետով հաստատված հավելվածի հատված 6-ը լրացնել «06.3.1 ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» աղյուսակով,

5) Որոշման 7-րդ կետի 5-րդ ենթակետի աղյուսակի`

ա. «5 800.0» թիվը փոխարինել «4 250.0» թվով,

բ. «5 260.2» թիվը փոխարինել «970.0» թվով,

գ. «1 970.0» թիվը փոխարինել «4 250.0» թվով,

6) Որոշման 7-րդ կետի 5-րդ ենթակետի աղյուսակը լրացնել «06.3.1 Ջրամատակարարում 3 560.2» տողով:

7) Որոշման 7-րդ կետի 6-րդ ենթակետի աղյուսակի`

ա. «7 100.0» թիվը փոխարինել « 22 990.2» թվով,

բ. «870.0» թիվը փոխարինել «1170.0» թվով,

8) Որոշման 7-րդ կետի 6-րդ ենթակետի աղյուսակից հանել «5113 Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում 16 190.2» տողը:

Կողմ( 7 ) դեմ( 0 ) ձեռնպահ( 0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.gyughapetaran@mail.r

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» հուլիսի 2019 թվականի № 22

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 97-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով՝ ավագանին որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին աճուրդով վաճառել համայնքային սեփականություն հանդիսացող՝

1) 03-050-0215-0015 ծածկագրով 1.26337 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով,
2) 03-050-0215-0016 ծածկագրով 0.57 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով,
3) 03-050-0215-0017 ծածկագրով 0.5593 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով,
4) 03-050-0215-0022 ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0.2412 հա գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասը՝ արդյունաբերական, գյուղատնտեսական արտադրության, տեխնոլոգիական սարքավորումների շահագործման պայմաններ ապահովելու, պահեստարանների համար նախատեսված շենքերի ու շինությունների կառուցման ու սպասարկման նպատակով:
2. Մեկնարկային գինը սահմանել.
1) 1.26337 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի համար՝ կադաստրային արժեքի 200 տոկոսի չափով,
2) 0.57 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի համար՝ կադաստրային արժեքի 200 տոկոսի չափով,
3) 0.5593 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի համար՝ կադաստրային արժեքի 200 տոկոսի չափով,
4) 0.2412 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասի համար՝ կադաստրային արժեքի չափով:

Կողմ(7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՐԱՐՍՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ
ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.gyughapetaran@mail.r

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» հուլիսի 2019 թվականի № 23

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 1073-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԼՈՒԾՈՒՄ ՊԱՀԱՆՋՈՂ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ ավագանին որոշում է.

Տալ հավանություն Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և Խաչփար համայնքի միջև 2019 թվականի հունիսի 27-ին կնքված ՀՀ կառավարության 2018 թ. սեպտեմբերի 27-ի թիվ1073-Ն որոշմամբ նախատեսված առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք ծրագրերի շրջանակներում համագործակցության մասին համաձայնագրին:

Կողմ(7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

| | |
|---|---|
| ԱՐԱՐԱՏ | ԱԼԵՔՍԱՆՅԱՆ |
| ՍԵՐԳԵՅ | ԳԵՎՈՐԳՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ | ԵՍԱՅԱՆ |
| ԼԵՎՈՆ | ԹԱՄՐԱԶՅԱՆ |
| ՌԱՆՏԻԿ | ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ |
| ԳԱՐԻԿ | ՊԵՏՐՈՍՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ